

## Հայաստանի ազգային գրադարան

### Հուլիսի 4

Հայաստանի ազգային գրադարանը տոնում է պետական կարգավիճակ ստանալու 100-ամյակը: 1919 թվականի հուլիսի 4-ին ընդունված «Պետական հանրային մատենադարանի մասին» օրենքով է գրադարանը ստացել Պետական գլխավոր գրադարանի կարգավիճակ:

Հայաստանի ազգային գրադարանում Հոբելյանական միջոցառումները կսկսվեն հուլիսի 2-ից: Այդ օրը ցուցադրությամբ կներկայանա Անձեռնմխելի գրականության բաժինը: Ժամը 12:00-ին Թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում կբացվի «Նվեր գրադարանին» խորագրով ցուցադրությունը: Նույն օրը՝ ժամը 14:00-ին, Անձեռնմխելի գրականության ընթերցասրահում կբացվի «Երևանի Արական գիմնազիայի գրադարանի գրականությունը» խորագրով ցուցադրություն:

Հուլիսի 3-ին նույնպես շատ հետաքրքիր ցուցադրություն է նախատեսված. Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժինը կներկայացնի Հայաստանի ազգային գրադարանի հրատարակությունները՝ մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, մատենագիտական ցանկեր և այլն:

Հուլիսի 4-ին Թամանյանական մասնաշենքում «Անտարես» հրատարակչության հետ համատեղ կկազմակերպվի մրցանակաբաշխություն: Հայաստանի ազգային գրադարանում կհանդիպեն 10 ամենաընթերցասեր այցելուները եւ ամենաընթերցված հայ ժամանակակից գրողները: 2018 թվականի լավագույն 10 ընթերցողներին կշնորհվի խրախուսական մրցանակներ: Պատվոգրերի կարժանանան նաև գրադարանի երկարամյա աշխատակիցները: Տոնական միջոցառումը կուղեկցվի համերգային ծրագրով: Հոբելյանական միջոցառման շրջանակում այդ օրը կբացվի նաև «Գրադարանի պատմությունը՝ լուսանկարներում» խորագրով ցուցադրությունը. Փոքր ցուցասրահում կներկայացվեն հետաքրքիր լուսանկարներ գրադարանի արխիվից:

Հուլիսի 9-ին Հայաստանի ազգային գրադարանի մեծ ցուցասրահում «Հեղինակները մեր ընթերցողներն են» խորագրով ցուցադրություն կկազմակերպի Գիտական և մամուլի ընթերցասրահը:

Միջոցառումների շարքը կեզրափակվի Սպասարկման բաժնի կողմից կազմակերպված «Լևոն Շանթ-150» խորագրով ցուցադրությամբ՝ հուլիսի 15-ին:

Հոբելյանական միջոցառումների շրջանակում ողջ տարվա ընթացքում նախատեսվում են նաև գիտական ընթերցումներ, դասախոսություններ, ցուցադրություններ եւ այլ միջոցառումներ:

